

ՄԱՏԱՂԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՐԲԱՎԱՅՐՈՒՄ

Լիլիթ Սիմոնյան, Կարեն Հովհաննիսյան

Հայկական սրբավայրերի ու դրանց հետ կապված ուխտագնացությունների վերաբերյալ գրավոր աղբյուրներում պահպանվել են բավականին առատ տեղեկություններ, որոնցում, մեծ մասամբ, հիշատակվում են մատաղի արարողություններ: Այդուհանդերձ, գոնե դաշտային ազգագրական աշխատանքը՝ ցույց է տալիս, որ տարբեր վայրերում և առանձին սրբավայրերում գոյություն ունեն մատաղի տարբեր ձևեր, որոնք երբեմն կարող են ունենալ նույնիսկ իրենց հատուկ անվանումները: Տվյալ հակիրճ հաղորդման մեջ նկատի ունենք «մատաղ» հասկացության այն նշանակությունը, որը կապված է կենդանիներ նվիրաբերելու գործողությունների հետ:

Ժողովրդական սրբավայրերը սովորաբար չեն ունենում հոգևորական-ծառայողներ, թեև հաճախ դրանք խնամվում են հատուկ մարդկանց կամ տոհմերի կողմից: Այդուհանդերձ, այդպիսի սրբավայրերը չի կարելի համարել չգործող, քանի որ դրանց մուտքն ազատ է ցանկացած հավատացյալի համար ցանկացած ժամանակ, իսկ հատուկ առիթներով, այդ թվում՝ մատաղն օրհնելու նպատակով, այդտեղ կարող են հրավիրվել քահանաներ:

Քանն այն է, որ մատաղի ծեսի մեջ քահանան կատարում է կարևո-

¹ 2011-2017 թթ. ընթացքում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատանքային խումբը գրառվում է ՀՀ տարածքում ժողովրդական սրբավայրերի ուսումնասիրությամբ: Աշխատանքային խմբի մասնակիցներն են. Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, 2015 թ.-ից՝ Լ. Ավետիսյան: Խմբի աշխատանքներին պարբերաբար մասնակցում են նաև Ն. Շամամյանը, Հ. Հակոբյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Բոբոխյանը, ինչպես նաև Մեղրաձոր գյուղի Մշակույթի տան աշխատակից Գ. Հակոբյանը:

Ուխտագնացությունների ուսումնասիրությունը կատարվում է հիմնական երկու մեթոդներով. ա. մասնագիտական խումբը մասնակցում է որոշակի ուխտագնացություններին և գրանցում է դրանց ընթացքում տեղի ունեցող պաշտամունքային գործողությունները, բ. կատարվում են ուխտագնացության մասնակիցների հարցումներ, որոնց ընթացքում գրանցվում են տվյալ ուխտագնացության ավանդույթի ներկայումս կենդանի և երբեմնի եղած պաշտամունքային գործողությունները և դրանց հետ կապված գրույցներն ու հավատալիքները:

րագույն այն արարողությունը, որը բնորոշում է բուն հայկական մատաղը ի տարբերություն այլ ժողովուրդների մեջ ընդունված կենդանիներ զոհելու նմանատիպ ծեսերի – աղի օրհնությունը: Հիմնականում մեկ անգամ օրհնված աղը պահվում է սրբավայրի մեջ կամ դրա տարածքի որևէ մասում և կարող է գործածվել արդեն առանց հոգևորականի միջամտության: Օրհնված աղի առկայությունը միշտ չէ, որ պարտադիր է և սովորաբար վերաբերում է միայն համեմատաբար խոշոր կենդանիներին՝ գառ, ցլիկ: Կենդանուն մորթելուց առաջ դրա բերանի մեջ են լցնում մի պտղունց, մի բուռ կամ երեք պտղունց աղ, երբեմն՝ ձեռքի խաչաձև շարժումով: Աղը կարող է մատուցվել կենդանուն նաև լավաշի վրա լցված, ինչպես դա արվում է Ջատկի մատաղի դեպքում՝ Ապարանի Լուսազյուղ գյուղի Թուխ Մանուկ, կամ Վիրի Վանք սրբավայրում¹: Հատուկ դեպքերում, սակայն, աղ են լցնում նաև զոհաբերվող աքաղաղի կտուցի մեջ²: Ինչպես տեսնում ենք, արդեն իսկ աղի հետ կապված պարզ արարողության մեջ առկա են տեղական մի շարք առանձնահատկություններ:

Հայկական ժամանակակից մատաղը ենթադրում է հանրային ճաշակում, որը կարող է ունենալ մի քանի դրսևորումներ.

ա. բուն հանրային զոհաբերություն, երբ կանխավ հավաքվում է ինչ-որ գումար՝ համայնքի անդամներից հատուկ մատաղի նպատակով: Այս տեսակին պատկանում է, օրինակ, ախառը: Հատուկ անուն ունեցող այդ տեսակը վերաբերում է գլխավորապես Արևելյան Հայաստանի պատմական գավառներին և իրագործվում է Ջատկին, նշանավորելով Մեծ Պահքի և առհասարակ ձմեռային տարեշրջանի ավարտը («ախառ» բառը նշանակում է ավարտ, վերջ)³: Ամենամյա այդ մատաղը երբեմնի այնքան նշանակալից էր, որ անգամ մարդահամարը կարող էր կատարվել ըստ «մատաղ ուտողների»⁴:

¹ **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, Դաշտային ազգագրական նյութ (հետազայում՝ ԴԱՆ), Արագածոտնի մարզ, Լուսազյուղ, 2015, հայտնել է Արարատ Պարույրյանը:

² **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արարատի մարզ, Գետազատ, 2017:

³ **Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 93-95:

⁴ Այս երևույթի, ինչպես նաև Սյունիքի և Շուշիի ախառի մանրամասն նկարագրությունը տես՝ **Փ. Տէր-Մովսէսեան**, Հայ գիւղական տունը, Վիեննա, 1894, էջ 51-52: Նկարագրությունից ի մասնավորի պարզ է դառնում, որ Սյունիքում մատաղը սովորաբար բաժանվում էր եփված ու լավաշի մեջ փաթաթված վիճակում, մինչդեռ Շուշիում եկեղեցու շրջակայքում փողում էին մեծ լաթեր և դրանց վրա ըստ բնակիչների քանակության հա-

- բ. Միանվագ մատաղ, երբ որևէ պաշտոնյա, մեծահարուստ կամ ուղղակի կարևոր ուխտ-փափագ ունեցող անձ հոգում է մեծ հանրային մատաղի բոլոր ծախսերը և հետևում է, որ այն բաժանվի համայնքի բոլոր անձանց միջև: Սովորաբար այս նպատակներով ընտրվում է ցուլ կամ մի քանի գառ կամ խոյ:
- գ. Անհատական կամ ընտանեկան մատաղ, երբ մեկ ընտանիք սեփական ցանկությամբ և միջոցներով նվիրաբերում է երբեմն հատուկ նպատակով գնված և մեծացրած կենդանի և հետագայում բաժանում է դրա միսը տարբեր դեպքերում 3-ից 12 (առավել հաճախ՝ 7) ընտանիքների կամ անհատ անձանց, իսկ մնացած մսով սեղան են գցում և հրավիրում հյուրեր: Անկասկած, մեծ մասամբ եթե այդ սեղանին մասնակցում են հեռավոր, անսպասելի հյուրեր, դա հատուկ օրհնություն է համարվում:

Անհատական կամ ընտանեկան մատաղի մի տարատեսակ է «**բաց մատաղը**», որը գրանցել ենք միայն Շիրակում: Լեռնակերտ (նախկին Շիրվանճուղ) գյուղի բնակիչ Ժորժիկ Մխիթարյանը, որը Ներսոյի Թուխ Մանուկ մատուռի խնամողն ու պահապանն է, բանակից իր որդու վերադառնալու կապակցությամբ սրբավայրի մոտ մատաղ էր կտրել և, որդուն ճանապարհների խաչմերուկի վրա կանգնեցնելով՝ պատվիրել էր մատաղի սեղանին հրավիրել բոլոր պատահական անցորդներին²: Նմանատիպ մատաղի նկարագրություն է բերել նաև Հուսիկ Վարդապետը Կարսի Փաղըրան գյուղում³:

Կարևոր է, որ մատաղի հենց այս ձևն է բուն «Աբրահամի մատաղը»: Բանն այն է, որ թեև ավանդաբար ցանկացած մատաղի օրհնությունն է «Մատաղը Աբրահամի մատաղ ըլնի» բանաձևը, սակայն ժողովրդական մի զրույց նկարագրում է Աբրահամի գործողությունները, երբ նա սպասում

վասար բաժիններով կտրատած հում միսն էին դնում, որպեսզի յուրաքանչյուր ուխտավոր վերցներ իր բաժինը:

- ¹ Ընտանեկան այսպիսի մատաղի մասնագիտական խումբը մասնակից է եղել, օրինակ, 2013 թ. Վարդենիկ գյուղում՝ Հակոբյանների ընտանիքի հրավերով, ընտանիքի զավակի՝ բանակից վերադառնալու առիթով: Մատաղի գառը գնվել էր երիտասարդի՝ բանակ մեկնելուց անմիջապես հետո, հատուկ սնուցվել էր և համապատասխան արարողությամբ մատաղ էր արվել վերադարձից հետո՝ Վարդավառի օրը:
- ² Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, Շիրակի մարզ, Լեռնակերտ, 2017:
- ³ Յ. Վ. Մ., Իմ նկատողութիւնները Ալէքսանդրապոլիս Ղարս// «Արարատ», 1883, էջ 88:

է որևէ անցորդի, որպեսզի մատաղ կտրի և հյուրի հետ սեղան նստի¹:

Միշտ չէ, սակայն, որ հանրային ճաշակումը, մատաղը մաս-մաս բաժանելը կամ դրանից բաժին հանելը նույնն է, ինչ համատեղ հացկերույթը: Մատաղի մի շարք այլ ձևեր ենթադրում են միայն ներկայությունը սրբավայրում՝ զոհաբերվող կենդանու հետ, որին հետևում են այլ գործողություններ: Այսպիսին են, որպես օրենք, գործողությունները ավելի փոքր կենդանիների հետ:

Մատաղի արարողությունները կարող են միանգամայն տարբեր լինել՝ կապված կենդանու տեսակից: Այսպես, սովորաբար, բոլոր կենդանիները մարդկանց հետ պտտվում են սրբավայրի շուրջ՝ 3, 7 կամ, ավելի հազվադեպ, 12 անգամ, աջից ձախ ուղղությամբ: Սակայն եթե գառը իր ոտքով շարժվում է մարդկանց զանգվածի հետ, իսկ աքաղաղին տանում են ոտքերը կապած, գլխիվայր կախված վիճակում, ապա ցլիկին հաճախ մորթում են առանց այդ դժվարիրագործելի արարողության: Որոշ դեպքերում, մասնավորապես, տոնական առիթներով, կենդանիներին զարդարում են, այլ դեպքերում՝ ոչ: Այսպես, Լիճքի Թուխ Մանուկ սրբավայրի մատաղացու կենդանիները պետք է զարդարված չլինեն, և դրանք մորթում են սրբավայրի մուտքի աստիճանների վրա այդ սրբավայրի խնամող ընտանիքի արական սեռի անդամները²: Ջնջուլուի Ս. Կարապետ վանքի Վարդավառի ուխտագնացության ժամանակ մատուցված մատաղի աքաղաղը, ընդհակառակը, զարդարված էր ժապավենով³:

Սովորաբար բոլոր մատաղների արյունով խաչ է նկարվում մասնակիցներից գոնե մեկի կամ մի քանիսի ճակատներին, սակայն կան նաև այլ ձևեր: Մասնավորապես, Գետարգելի վանքի զոհաբերվող գառան արյունը քսում են զոհ մատուցողի աջ ձեռքի թաթի արտաքին մասում⁴: Առհասարակ լայն տարածված է գառան ականջը կտրելը սրբավայրում և այդ արյունով արարողությունը կատարելը, մինչդեռ մորթվում է գառն սրբավայրից դուրս, ոչ հեռու, հատուկ նախատեսված վայրում կամ գյուղի տարածքում:

Համաձայն Ս. Սահակ Պարթև հայրապետի կանոնների, մատաղի

¹ Աբրահամ և Մամիռել, Չիթունի, Սպարկերտի ազգագրական նյութեր// ԳԱԹ արխիվ, Չիթունու ֆոնդ, 2, տետր ԺԳ, էջ 28-47:

² Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, Լիճք, 2013:

³ Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Հ. Հակոբյան, ԴԱՆ, Արարատի մարզ, Ուրցածոր-Ջնջուլու, 2014:

⁴ Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, Կոտայքի մարզ, Առինջ-Գետարգել, 2016:

կենդանու մորթին և մարմնի որոշ մասերը պատկանել են վանքին. «...հասքն ձեր եղիցին ի պատարագաց կաշի եւ աջոյ երի անդամ եւ ճրագու, դմակ եւ սիրտ եւ լերդաբոյթ եւ երիկամունքն ճարպովին ի կողից եւ ի խոտցաց մասն, լեզուն եւ աջոյ ունկն, շրթունքն հոտոտելեալքն, աջոյ ակն եւ ամենայն խորհրդական մասունքն»¹, և այս կանոնի համաձայն գործող վանական համալիրին կարող էին միանգամայն ազատ նվիրաբերվել կենդանիներ՝ առանց մորթվելու: Միջնադարում և ընդհուպ մինչև 20-րդ դ. սկիզբ մի շարք վանքեր ունեին իրենց հատուկ հոտերը, որոնցից ընտրվում էին կենդանիներ՝ ուխտագնացության ծիսական համալիրի մեջ զոհաբերելու համար: Ուխտավորներն ըստ ցանկության կարող էին գնել այդպիսի կենդանի: Մասնավորապես, այդպիսի սովորույթ կար Դարաշամբի Ս. Ստեփաննոս վանքում²: Կենդանիներ էին նվիրաբերվում նաև Փուֆկու Ս. Գևորգ վանքի հոտի համար³:

Մեր ժամանակներում այս սովորույթները վերացել են: Մատաղի կենդանու մորթին ու ոսկորները թաղվում են սրբավայրի տարածքում կամ ուղղակի հեռացվում են սրբավայրից: Հետաքրքիր գործողություններ են կատարվում կենդանիների գլուխների, երբեմն նաև՝ ոտքերի հետ: Այսպես, մի շարք վայրերում կենդանու (գլխավորապես, աքաղաղի) գլուխը թողնվում է անմիջապես մորթելու վայրում: Այլ դեպքերում հատկապես աքաղաղի գլուխը և ոտքերը կարող են մտցվել սրբավայրի շինության պատերի ճեղքերից մեկի մեջ: Վերջապես, կան դեպքեր, երբ գառան գլուխը դրվում է եկեղեցու պատուհանին⁴ կամ աքաղաղների գլուխները նետվում են սրբավայրի շինության կտուրը⁵:

Աքաղաղի մատաղը տարածված է պատմական Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, սակայն այն հարգի չէ Շիրակում, որտեղ գերադասում են կամ գառ, կամ աղավնի մատաղ անելը: Աքաղաղին կարող են ոչ միայն մորթել, այլև ուղղակի կտրվածք անել դրա կատարին, արյունը

¹ Սրբոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի գիր ասանդութեան// Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ. Հակոբյանի, հատ. Բ, Երևան, 1971, էջ 234-235:

² Րաֆֆի, Ճանապարհորդություն Պարսկաստան// Երկեր 10 հատորով, Երևան, 1957, հատ. 8, էջ 332:

³ **Լ. Սիմոնյան**, Փուֆկու Ս. Գևորգ// Էջմիածին, 2017, թ. Է, էջ 80-81:

⁴ Այսպիսի օրինակ է Արագյուղի Թուխ Մանուկը, **Լ. Սիմոնյան**, ԴԱՆ, Կոտայքի մարզ, Արագյուղ, 2012:

⁵ **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արմավիրի մարզ, Նոր Արմավիր, 2017:

քսել սրբավայրի շինության պատին և այն մարդու ճակատին, որի համար զոհաբերվում է կենդանին, այնուհետև ներկաների ճակատներին, իսկ կենդանուն հենց այդպես նվիրել որևէ անցորդի¹: Այլ դեպքերում կտրվել է աքաղաղի գլուխը, իսկ մնացած մասը նվիրվել է անցորդի կամ մասնատվել և նոր բաժանվել է:

Լոռիում, որտեղ, ի տարբերություն Շիրակի, աքաղաղը մատաղի առավել տարածված կենդանին է, աքաղաղի մատաղն ունի իր հատուկ անվանումը՝ «տապլա», թեև մնացած ծեսը ոչնչով չի տարբերվում այլ վայրերի մատաղից:

Մատաղի յուրահատուկ կենդանի է աղավնին: Պատմական ամբողջ Հայաստանին բնորոշ է աղավնուն բաց թողնելու արարողությունը, սակայն հատուկ անվանում այն ունի միայն Շիրակում ու Սպիտակի՝ Շիրակին մոտ գտնվող գյուղերում և կոչվում է «ազատ մատաղ»²: Շիրակում այդ անվանումը կարևոր է այն բանով, որ այստեղ տարածված է նաև աղավնուն մորթելը: Աղավնիները լինում են միշտ զույգով, որոնց մորթելուց հետո մեկը թողնում են սրբավայրում, մյուսը՝ տանում: Ընդունված է նաև մասնատել ու բաժանել թռչունի մարմինը:

Հետաքրքիր է, որ Բասենում ևս զոհաբերել են աղավնի, անգամ դրա արյունը հոսեցրել են սրբավայրի պատով, իսկ Ջատկի սեղանին տապակած աղավնին պարտադիր ճաշատեսակ էր³: Աղավնու մատաղի միջանկյալ ձևը պահպանվել է Ապարանի Ծաղկաշեն գյուղի Թուխ Մանուկ սրբավայրում: Այստեղ աղավնիների ոտքի վրա կտրվածք անելով՝ արյուն են հանում, քսում սրբավայրի պատին ու երեխայի ճակատին, իսկ աղավնիներին բաց են թողնում⁴:

Մատաղը եփելու եղանակները նույնպես որոշակիորեն տարբեր են միմյանցից: Նախ, ինչպես նշվեց, որոշ վայրերում մատաղի միսը կարող է բաժանվել հում վիճակում: Մեծ մասամբ, սակայն, բաժանվում է արդեն եփված մատաղը: Մատաղը կարող է եփվել սրբավայրի տարածքում

¹ **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արգածոտնի մարզ, Հացաշեն, 2015, հայտնել է Տարոն Մարտիրոսյանը:

² **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Շիրակի մարզ, Սարատակ, Գյումրի, Լեռնակերտ, 2017 և այլն:

³ **Գ. Հակոբյան**, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 89:

⁴ **Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան**, ԴԱՆ, Արգածոտնի մարզ, Ծաղկաշեն, 2011:

վառված խարույկի վրա կամ, ավելի հազվադեպ, առկա բնական թոնիրների մեջ¹, իսկ մեր ժամանակներում նաև՝ հատուկ սարքված օջախների մեջ: Մեծ մասամբ մատաղի միսը խաշվում է ջրի մեջ, բաժանվելով ոչ մեծ կտորների, թեև քիչ չեն դեպքերը, երբ հատկապես գառան ներքին օրգանները խորովվում են և մատուցվում են առանձին²: Հավանաբար, այս վերջինը հիշողություն է վանականների բաժնի վերաբերյալ, քանի որ, ինչպես նշվեց վերևում, Ս. Սահակի կանոնի համաձայն, նրանց են պատկանել զոհի ներքին օրգանները ևս: Մատաղի խաշլամայից առանձնացվում են բաժանելու համար նախատեսված 7-12 մասերը, որոնք կարող են բաժանվել խաշլամայի ջրով հանդերձ՝ ափսեների կամ թասերի մեջ և կամ առանց ջրի՝ փաթաթված լավաշի մեջ: Ափսեներով բաժանելու դեպքում տարան վերադարձվում է առանց լվանալու, մեջը մի քիչ աղ լցված: Մատաղի սեղանին մասնակցելուց և մատաղի բաժնից հրաժարվել չի կարելի, դա դիտվում է որպես մեծ վիրավորանք մատաղ մատուցողի հանդեպ:

Մյուս դեպքերում մատաղի միսը ոչ թե բաժանվում է, այլ դրանով պատրաստվում է փլավ, հարիսա: Սուլակի Մայրավանքի (Ս. Աստվածածին վանքի) ուխտագնացության դեպքում մատաղ արված մի քանի աքաղաղների փետրատված մսեղիքները համատեղ են եփվում միևնույն մեծ կաթսայի մեջ՝ վանքի շրջապատում աճող ծառերի ու թփերի ճյուղերից պատրաստված խարույկի վրա, մսի վրա ավելացվում է սոխ, ցորեն և կանաչեղեն, իսկ պատրաստ լինելուց հետո համատեղ ճաշկերույթ է կազմակերպվում, որին հրավիրվում են նաև այլ ուխտավորներ: Արարողությունը, ինչպես և ինքը ճաշատեսակը կոչվում է «վանքի փլավ»³:

Հավանաբար, նման մի արարողություն է նաև ուխտատեղիում մատաղ արված կենդանիների մսից պատրաստված հարիսայի համայնական ճաշակումը: «Ցասման հարիսան», որի հիշատակությունը գտնում ենք «Սասնա Ծռեր» էպոսում⁴, կապված է հանրային մատաղի այնպիսի տեսակի հետ, երբ զոհը մատուցվում էր որևէ աղետալի իրավիճակից (Ա-

¹ Գ. ա. ք. Աղանեանց, Վանի կեանքից, «Լումայ», 1898, Բ, էջ 288:

² Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Ա. Գրիգորյան, ԴԱՆ, Կոտայքի մարզ, Աղբյուրակն, 2017, Ս. Աջի ուխտագնացություն Վարդավառին:

³ Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, ԴԱՆ, Կոտայքի մարզ, Սուլակ, 2015:

⁴ Սասնա Ծռեր, Երևան, 1977, էջ 23-24, 66:

ստճո ցասման դրսևորումից) դուրս գալու նպատակով: Ենթադրվում է, որ նման մատաղներին պետք է մասնակցեր ամբողջ բնակչությունը: Ցասման թե տոնական, մատաղի միսը և մսաջուրը համարվում են օգտակար և հրաշալի, քանի որ օրհնած են¹:

Մատաղը կարող էր ոչ միայն մատուցվել, այլև «արտասանվել», այսինքն, արտահայտվել խորհրդանշական ձևով, խոսքի միջոցով: Խոսքի և մատաղի միջև գոյություն ունի որոշակի հմայական կապ: Ընդունված է, որ եթե մարդը Աստծուն կամ որևէ սրբի, նաև սրբավայրի, դիմում է հրատապ խնդրանքով, և կատարված իղծի կամ փրկության համար մատաղ է խոստանում, ապա անպայման պետք է կատարի իր խոստումը, այլապես կպատուհասվի: Այս թեմայով գոյություն ունեն բազմաթիվ ավանդազրույցներ և առասպելներ², ինչպես նաև կենդանի անձանց վկայություններ³:

Սակայն փոքր-ինչ այլ են հմայական աղոթքներում նկարագրվող անիրական մատաղները:

Սննդային թունավորումների, սննդից զզվելու դեպքում արտասանվող հմայական աղոթքների մեջ հանդիպում ենք «թարս մատաղի» նկարագրությանը, երբ տեղի են ունենում տարօրինակ, անբնական գործողություններ.

... Բնի միջին ճուտ կար, ճուտն էր ծիրանի.

Անուտք նի էլայ, անդանակ մորթեցի,

Անժշխայ (առանց զզվելու) կուլ տուեցի...⁴

Սիպտակ հլետորը սիպտակ ձեռը տարաւ, սիպտակ ձուկը հանեց, անդանակ մորթեց, անկրակ խորովեց, անիշտահ մարսեց⁵:

Ըստ Ս. Հարությունյանի, տիեզերակարգի խաթարման դեպքում, այդ թվում՝ միկրոկոսմոս - օրգանիզմի խանգարման դեպքում, անիրական

¹ Ինչպես էպոսում, այնպես էլ ազգագրական որոշ նյութերում կան հատուկ ցուցումներ՝ արդեն եփված մատաղի վրա թափորով կատարվող օրհնության հատուկ ձեսի վերաբերյալ: Մեր ժամանակներում այդպիսի արարողություններ չեն կատարվում կամ չեն գրանցվել մեր աշխատանքային խմբի կողմից:

² Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 67, թ. 179, էջ 68-69, թ. 186 և այլուր:

³ Օրինակ՝ Լ. Սիմոնյան, ԴԱՆ, Մեղրածոր, 2013:

⁴ Տ. Նավասարդեանց, Հայ ժողովրդական հեքիաթներ, գ. 6, Թիֆլիս, 1890, էջ 145:

⁵ Տ. Նավասարդեանց, Հայ ժողովրդական հեքիաթներ, գ. 7, Թիֆլիս, 1891, էջ 133:

զոհաբերությունը կոչված է վերականգնել խախտվածը հակառակ, թարս գործողություններով¹:

Ըստ ամենայնի, նման հմայական-անիրական, կամ, ավելի ճիշտ, անկանոն մատաղի հետ գործ ունենք ծաղիկ հիվանդությունից ազատվելու համար մատուցվող մատաղի դեպքում: Եթե սովորաբար որպես մատաղ ընտրվում է արու կենդանին, և այն կարող է մորթել միայն տղամարդը, ապա այստեղ զոհվում է էգ կենդանին՝ հավը կամ նույնիսկ ոչխարը. «Հիանդի լաւանալուց յետոյ, մատաղացուն էգ պիտի լինի և այն պիտի ուտել խաշած և ոչ աղած ու խորոված: Եթէ մատաղացուն հաւ է, ձու չաճած հաւի ճուտ պիտի լինի»²:

Ինչպես նշվեց, ժողովրդի ընկալման մեջ մատաղի ծեսի հիմնադիրը համարվում է հայր Աբրահամը: Իսահակի զոհաբերության հատվածում (Ծն 22.1-19) մարդկային զոհաբերության փոխարեն Աստված առաջարկում է գառան մատաղը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր մատաղ իր էությանբ փոխարինող զոհ է, այսինքն, կենդանին զոհաբերվում է այն մարդու փոխարեն (կամ առողջանալու, փրկվելու համար), ում նվիրված է տվյալ ծեսը: Պատահական չէ ուրեմն, որ զոհը և այդ անձը պետք է նույնականանան, և հենց դա է կատարվում մատաղի արյունը ճակատին կամ ձեռքին քսելու միջոցով³: Սակայն կա աստվածաշնչյան մեկ այլ կարևոր հատված ևս (Ծն18), որը ժողովուրդը կապում է մատաղի ավանդույթի հետ: Դա երեք հրեշտակներին հյուրընկալելու հատվածն է, որը ժողովրդի մեջ պատմվում է ի թիվս այլոց նաև խաղողի որթի առաջացման կապակցությամբ⁴: Հորթի զոհաբերությունը աստվածային հյուրերի համար ծառայում է հանրային մատաղի մոդել, իսկ այդ զոհի ոսկորից առաջացած բույսը, որից ստացվում է Տիրոջ արյունը խորհրդանշող գինին, կապում է մատաղը ուղղակիորեն քրիստոնեական խորհուրդների հետ:

Էտ ի՞նչ կանես, խայր Ապրէխամ:

¹ **Ս. Հարությունյան**, Հայ առասպելաբանություն, Պէյրոս, 2000, էջ 23:

² **Գ. Սեֆերեան**, Ծաղկի հիւանդութիւնը Նոր Արմաիրցիների մօտ ինչպէս է ընունուած և ինչ ցաւ է համարում// ԳԱԹ արխիվ, Ե. Շահագրգի ֆ., VII, 43, թ. 1:

³ **L. Simonian**, The Blood and Oath, Բանբեր Հայագիտության, Երևան, 2015, № 2, էջ 129.

⁴ **Ա. Եպս. Ժամկոչյան**, Աստվածաշունչը և հայ ժողովրդական ավանդույթը, Երևան, 2012, էջ 188:

Որդին զինած տըրած սեղան,
 Ըմէնք կերան կըշտացան.
 Ուսկոռ զարկին պատ կայնաւ,
 Ուսկոռն էլաւ ճութ պարինակ,
 Խաւող կախաւ սևը սիվտակ:
 Դէ քաղեցէք դէ քամեցէք,
 Ընտիր ընտիր աման լցէք,
 Սուրբ պատարաք պաժկի արէք,
 Ինչ խոով կայ խաշտըցուցէք,
 Ինչ անբախտին հաղորթեցէք¹:

Աբրահամի օրինակով կատարվող հանրային մատաղը իր ներքին բովանդակությամբ և արտաքին ձևավորումով մոտենում է քրիստոնեական **սիրաճաշի** գաղափարին, թեև դրանում շարունակում է իր դերը կատարել փոխարինող զոհի արձագանքը:

Ագապեի (սիրաճաշի) սովորույթը կապվում է առաջին քրիստոնյաների ավանդույթների հետ, և դրա մասին առաջին անգամ կարդում ենք Լավոդիկեի օրենքների մեջ, որտեղ հրահանգվում է ագապե չկատարել եկեղեցու ներսում²: Հնում մատաղի ծեսը կապված է եղել ուխտատեղիներում, մասնավորապես, վանքերում, համատեղ ճաշկերույթի սովորույթի հետ, որի քրիստոնեական խորհուրդը ագապեն է՝ սիրաճաշը³: Ելնելով, սակայն, Ս.Սահակի օրենքներից, ագապե-մատաղը անհրաժեշտ էր կատարել առնվազն վանքերում՝ բաժին հանելով ուխտի մանկանց, վանականների համար, որտեղ դա ոչ միայն անապատական-հոգևորականներին սատարելու և յուրովի շնորհակալություն հայտնելու ձև էր, այլև հնարավորություն էր հայր Աբրահամի նման Աստծու հետ սեղան նստելու, քանի որ վանքերը Աստծու տունն էին, իսկ վանականները՝ Նրա առավել նվիրյալ սպասավորները⁴: Խորհրդային տարիներին վանքերի մեծ մասի վերացումը որպես գործող հոգևոր հիմնարկների, չջնջեց հա-

¹ Տ. Նավասարդեանց, Հայ ժողովրդական հեքիաթներ, գ. 6, Թիֆլիս, 1890, էջ 147-148:

² «Չէ պարտ յեկեղեցուջ ագապս առնել եւ բազմականս արկանել ի տաճարի Աստուծեյ, ճաշ ուտել եւ խրախունս առնել», տես՝ Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, Երևան, 1964, էջ 235:

³ **Կանոնք Ս. Սահակ Պարթևի**// Կանոնագիրք Հայոց, էջ 384:

⁴ Նույն տեղում, էջ 394:

րյուրամյակներով ամրապնդված այդ ավանդույթը, այնպես որ հոգևորականների մասնակցությամբ թե առանց այդպիսինի, ժողովուրդը շարունակեց վանքի մատաղի ու հանրային ճաշկերույթի սովորությունը:

Ագապե-մատաղի գաղափարը հենց այն կետն է, որտեղ Հայ Առաքելական Ս. Եկեղեցին, պահպանելով կենդանական զոհաբերությունը, տարանջատել է այն հեթանոսական սովորույթներից: Այսպես, Ս. Պողոս Առաքյալը հրահանգում է. «Եւ մի՛ կռապարիշտ լինել որպէս ոմանք ի նոցանէ, որպէս և գրեալ է, Նստաւ ժողովուրդն ուտել և ընպել և յարեան ի խաղալ» (Ա Կորնթ Ժ.7): Եւ այլուր. «Այսուիետեւ, եղբարք, յորժամ ի մի վայր ժողովիցիք ուտել, միմեանց մնասջիք» (Ա Կորնթ ԺԱ.33): Հեթանոսական զոհաբերությունը և քրիստոնեական ագապեն երկուսն էլ ենթադրում են սննդամթերքի գործածում, իսկ հաշվի առնելով, որ վաղ քրիստոնեության օրոք հնարավոր չէր միս ճաշակել, եթե չմորթվեր որևէ կենդանի, մսեղեն սննդի նախապատրաստումը կարող էր նմանվել հեթանոսական զոհաբերության կամ սովորական խնջույքի¹: Մեկը մյուսից տարբերվում է գլխավորապես արարողակարգով և նպատակով: Մասնավորապես, քրիստոնեական մատաղին բնորոշ չեն այն ձևերը, որոնք բնութագրական են հելլենիզմի շրջանի վկայություններից հայտնի զոհաբերություններին, մասնավորապես, ողջակիզմանը²:

Այդ ամեննին չի նշանակում, որ իր արտաքին դրսևորումների մեջ քրիստոնեական մատաղը չի կարող թվալ հեթանոսական զոհաբերությանը նման կամ չի կարող ժառանգած լինել նախաքրիստոնեական խնջույքի որոշ տարրեր: Ի վերջո, մինչև վերջին ժամանակները ևս մսեղեն սնունդ ունենալու համար անրաժեշտ էր մորթել կենդանիներ: Այսպես, ըստ Հ. Մնձուրու, Դերսիմի հայերը միս էին ուտում տարին երեք անգամ՝ Զատկին, Ս. Ծնունդին և Բարեկենդանին³: Այսինքն, նրանք միայն մատաղի միս էին ճաշակում: Աղքատների համար, փաստորեն, միս ուտելու

¹ Սիրաճաշի վաղքրիստոնեական սովորույթի ծագման, հնարավոր մշակութային ազդեցությունների և զուգահեռների վերաբերյալ տես՝ **Ս. Н. Соколов**, Агапы, или вечери любви, в древнехристианском мире, М.-СПб, 2013.

² Հին Հունաստանի նյութի վրա հեթանոսական զոհաբերության նկարագրությունը տես՝ **W. Burkert**, Homo necans: The Anthropology of Ancient Greek Sacrificial Ritual and Myth, London, 1983, pp. 3-7.

³ **Հ. Մնձուրի**, Երկեր, Երևան, 1986, էջ 223:

միակ հնարավորությունը մատաղ-ագապեներին մասնակցելն էր: Այսպիսով իսկ մատաղը վերաբերում է տկարներին օգնելու այն ներքին պարտավորությանը, որը բնորոշ է քրիստոնյային: Չի կարելի չնկատել, սակայն, որ այդ դեպքում անհասկանալի են մնում զոհաբերված կենդանու արյան հետ կատարվող գործողությունները, նրա մահով՝ մարդկային կյանքի փրկությունն ապահովելու գաղափարները, նույնիսկ աղի օրհնությունը, որոնք, իհարկե, պահպանվել են անկախ սիրաճաշի սովորությունից կամ վանքում կատարվող տոնի կանոններից: Կարելի է դիտարկել դրանք որպես քրիստոնեական կենսաձևի «խախտում» կամ որպես էթնիկ առանձնահատկություն, սակայն դրանք շարունակում են մնալ հայկական մատաղի տիպական բաղադրիչներ և կրողների կողմից ընկալվում են որպես զուտ քրիստոնեական դրսևորումներ:

ՄԱՏԱՂԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՐԲԱՎԱՅՐՈՒՄ

Լիլիթ Սիմոնյան, Կարեն Հովհաննիսյան

Քանալի բառեր. մատաղ, կենդանու զոհաբերություն, ագապե-սիրաճաշ, վանքի տոն, Ս. Սահակ Պարթև

Ժողովրդական սրբավայրերում մատուցվող կենդանիների մատաղի ծեսը բաղկացած է մի շարք արարողություններից, որոնք իրենց հերթին կախված են մի կողմից՝ մատաղի տեսակից, մյուս կողմից՝ մատաղի համար կենդանու ընտրությունից: Հայոց մեջ մատաղները բաժանված են երեք տեսակի ըստ հասարակական ընդգրկվածության. հանրային, որևէ պաշտոնյայի կամ մեծահարուստի կողմից արված և անհատական-ընտանեկան: Մատաղի տեսակները ըստ կենդանիների և դրանց զոհաբերման ձևերի կարող են ունենալ իրենց հատուկ անվանումները. «բաց մատաղ», «ազատ մատաղ», «տապալ»: Որոշ տարածաշրջաններում կարող են լինել կենդանիների մատաղի յուրահատուկ ձևեր, ինչպես Շիրակում հայտնի է զույգ աղավնիների զոհաբերությունը: Ժողովուրդը մատաղի ծեսի առաջացումը կապում է հայր Աբրահամի հետ: Մատաղի բուն քրիստոնեական կերպարանքը կապվում է ագապե-սիրաճաշի արարողակարգի հետ: Մյուս կողմից դրա էթնիկ դիմագիծը պայմանավորված է ագապեից անկախ տարրերից, որոնք ունեն բուն տեղական բնույթ:

МАТАХ В НАРОДНОМ СВЯТИЛИЩЕ

Лилит Симонян, Карен Оганисян

Ключевые слова: *матах, животная жертва, агапе, Авраам, монастырский праздник, Св. Саак Партев*

Ритуал “матах”, исполняемый в народных святилищах, состоит из ряда обрядовых действий, которые в свою очередь зависят с одной стороны – от вида матаха, с другой – от выбора животного для произведения ритуала. Среди армян матах разделяется на три вида: общественный, произведенный высокопоставленным лицом или богатым человеком для всей общины и персонально-семейный. Виды матаха по параметру выбранного вида животного могут иметь особые названия: “открытый”, “свободный”, “тапла”. В некоторых местах могут бытовать особые виды животной жертвы-матаха. Так, в Шираке известно жертвоприношение пары голубей. Народ связывает возникновение традиции матаха с праотцом Авраамом. Собственно христианский облик матаха связан с традицией агапе, или трапезы любви. С другой стороны, его этническое обличье обусловлено элементами, отличными от агапе, которые имеют исконно местное происхождение.

MATAGH IN THE FOLK SANCTUARY

Lilit Simonian, Karen Hovhannisyan

Keywords: *matagh, animal sacrifice, agape, Abraham, monasterial feast, St. Sahak Partev*

The ritual of “*matagh*” that has been executed in the folk sanctuaries consists of several customary actions which depend on the one hand on the kind of the ritual itself, on the other hand – on the selection of the animal for its execution. Among Armenians *matagh* is divided into three main types: communal, executed by a formal leader of the communion or by a rich person for the whole communion, and personal-familiar. Kinds of *matagh* according to the selected species may have special names such as “open”, “free”, “*tapla*”. In some locations exist special forms of the animal sacrifice-*matagh*. There is a unique sacrifice of a couple of doves in Shirak.

People connect the origination of *matagh* tradition with the biblical father Abraham. A Christian specification of *matagh* is connected with the tradition of *agape*, or love feasts. On the other hand, its ethnic outlook is stipulated by elements different from *agape*, which have local origin.